Հարգելի՛ բարեկամ

Ուրախ եմ ողջունելու Ձեզ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում գործող Ծաղկաձորի քաղաքային համայնքի պաշտոնական կայքում:

Մեծապես կարևորելով մեր քաղաքի նկատմամբ հանրային հետաքրքրությունը՝ միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Ծաղկաձորն այսօր ընթանում է նորովի բարեփոխումների և արդիական զարգացումների յուրովի ճանապարհով:

Այդ նշանակալի ճանապարհը արդյունավետորեն անցնելու նկատառումներով համայնքը լիարժեքորեն կիրառելու է հրապարակային գործելաոճի բոլոր սկզբունքներն ու կատարած աշխատանքի հաշվետվողականությունն ապահովելու հիմնական մոտեցումները:

Ցանկալի է , որ կայքի ենթաբաժիններում առկա տեղեկատվության ուսումնասիրման արդյունքում այցելուները ներկայացնեն նաև իրենց դիտարկումներն ու առաջարկությունները Ծաղկաձորի քաղաքային համայնքի առօրյան էլեկտրոնային այս միջավայրում առավել համակողմանի ներկայացնելու վերաբերյալ:

Հարգանքներով

Ծաղկաձորի քաղաքապետ *Ա.Հարությունյան*